# ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

## *Աւստրիոյ կայսերական ազգատոհմին ցեղագրութիւնք :*

( Կրօնքն . Ուղղափառ կաթողիկէ հաւատքով )

ԱՐԴԻ իշխող կայսրը որ կը կոչուի Փրանկիսկոս–Յովսէփ–Ա.–Կարոլոս ծնած է 1830ին Օգոստոսի 18ին. իր պատուանուններն ասոնք են կայսր Աւստրիոյ, Թագաւոր Հունգարիոյ և Պոհեմիոյ. Թագաւոր Լոմպարտիոյ և Վենետկոյ, Դալմատիոյ, և Խռուաթստանի, Ըսքլաւոնիներու, Կալիցիոյ, Լոտոմերիոյ, Իլլիրիոյ. մեծ Վոյվոտա Սերպերու, արքիդուքս Աւստրիոյ և այլն և այլն. 1848ին Դեկտ. 2ին յաջորդեց իր հօրեղբօրը Փերդինանդոս Ա.ին, որ նոյն օրը հրաժարելով կայսրութենէն՝ իր եղբօրը ու կայսեր հօրը թողուց աթոռը. բայց երբոր ան ալ հրաժարեցաւ յաջորդեց իր անդրանիկը, հրաժարած կայսրը անորդի ըլլալուն համար :

Կայսեր եղբայրքը. Ա. Փերդինանդոս–Մաքսիմիլիանոս–Յովսէփ արքիդուքս. ծնած Յուլիսի 6. 1832ին հազարապետ և տէր Ուլան ըսուած զօրաց Ըրդ գնդին. ծովային զինուորութեան մէջ տեղակալ եռայարկ նաւի. — Բ. Կարոլոս–Լուդովիկոս–Յովս–Մարիամ. Յուլ. 30ին 1833ին ծնած, նոյնպէս հազարապետ Ուլան ըսուած զօրաց Էրդ գնդին. — Գ. Լուդովիկոս–Յովս–Անտոն–Վիկտոր 1842 Մայիսի 15ին ծնած :

Կայսեր հայրն ու մայրը. Փրանկիսկոս–Կարոլոս–Յովսէփ 1802 Դեկտ. 7ին ծնած իշխան և արքիդուքս Աւստրիոյ. Թագաւորազուն իշխան Հունգարիոյ և Պոհեմիոյ և այլն : Որդի Փրանկիսկոս Ա. կայսեր. ծնած իր երկրորդ ամուսնութենէն, Նէապօլսոյ Թագաւորին Փերդինանդոս Դ. ին Մարիամ Թերեզա աղջկանէն. հրաժարեցաւ կայսրութենէ Դեկտ. 2, 1848ին ՚ի նպաստ իր անդրանկին : Ամուսնացեալ 1824 Նոյեմբերի 4ին Սոփիա–Փրեդերիկա–Տորոթէա–Վիլմէն Պաւիերայի Մաքսիմիլիանոս Յովսէփ Թագաւորին դստերը հետ որն որ ծնած է 1805 Յնվ. 27ին :

Կայսեր հօրեղբայրն ու հօրաքոյրերը. Ա. Փերդինանդոս Ա. Կարոլոս–Լէոփոլդ–Յովս–Փրանկիս–Մարկելինոս, ծնած 1793 Ապր. 19ին. անդրանիկ որդի Փրանկիսկոս Ա. կայսեր. իր մայրը Նէապօլսոյ Թագաւորին դուստրն էր Մարիամ Թերեզա երկրորդ ամուսին Փրանկիսկոս կայսեր : Յաջորդեց իր հօրը 1835 Մարտի 2ին և անուանեցաւ իբրև կայսր Աւստրիոյ Փերդինանդոս Ա. իբրև Թագաւոր Հունգարիոյ և Պոհեմիոյ՝ Փերդինանդոս Ե. Հունգարացւոց Թագաւոր պսակուեցաւ 1830 Սեպտ. 28ին. ու 1836 Սեպտ. 7ին ալ Թագաւոր Պոհեմիոյ. 1838 Սեպտ. 6ին Թագաւոր Լոմպարտիոյ և Վենետկոյ. հրաժարեցաւ կայսրութենէն 1848 Դեկտ. 2ին : Ամուսնացած է 1831 Փետր 27ին Մարիամ–Աննա–Քարոլինա Սարդենիոյ Վիքտոր–Էմմանուէլ Թագաւորին դստեր հետ, որն որ ծնած է 1803 Սեպտ. 19ին :

Բ. Մարիամ–Կլեմենտինա 1798 Մարտի 1ին ծնած՝ արքիդքսուհի Աւստրիոյ. ամուսնացած 1816 Յուլ. 28ին. Սալէրնոյի Նէապօլսոյ իշխանին հետ՝ այրի մնացած 1851 Մարտի 10ին :

Գ. Մարիամ–Աննա–Փրանկիսկա–Թերեզա–Յովս–Մէտարտա 1804 Յունիսի 8ին ծնած :

Կայսեր մեծ մայրը. Շարլոթթա–Աւկուստա դուստր Մաքսիմիլիանոս Յովսէփ Պաւերայի Թագաւորին և քոյր արդի Սոփիա կայսերամօր, ծնած 1792 Փետր. 8ին. ամուսնացած Փրանկիսկոս կայսեր 1816 Նոյեմբ. 10ին և չորրորդ ամուսին Փրանկիսկոսի. ուսկից այրի մնաց 1835 Մարտ 2ին :

Կայսեր մեծ հօրեղբայրները, ու անոնց յաջորդները. և կամ իր պապուն Փրանկիսկոս Ա. կայսեր եղբայրներն : Փրանկիսկոս Ա. կայսր, մեծ որդի Լէոպոլտոս Բ. կայսեր և Մարիա–Լուիզիա կայսրուհւոյն որն որ Սպանիոյ Կարոլոս Գ. Թագաւորին դուստրն էր :

Որդիքը

Ա. Փերդինանդոս–Յովս–Մկրտ, ծնած 1769 Մայիսի 6ին. իբրև արքիդուքս Տոսկանայի Փերդինանդոս Գ. ուստի ասոր որդիքը Տոսկանայի ցեղագրութեան մէջ կը գտնենք : Ինքը մեռաւ 1824 Յունիսի 18ին :

Բ. Կարոլոս–Լուդովիկոս–Յովս. 1771 Սեպտ. 5ին ծնած, ու 1847 Ապր. 30ին մեռած. 1801 Սեպտ. 17ին ամուսնացած Նասաւ–Վէյլպուրկի Հանրիէթթա իշխանուհւոյն հետ, որն որ մեռաւ 1829. Դեկտ. 29ին, հինգ որդի թողլով որ են ասոնք :

1. Մարիամ–Թերէզա–Իզապէլլա Թագուհի երկուց Սիկիլիայց.

2 Ալպերտ–Փրեդերիկոս–Ռոտոլփոս 1818 Օգոստոսի 3ին ծնած. զօրավար հեծելազօրաց և հրամանատար կայսերական Գ. բանակին, քաղաքական և զինուորական կառավար Հունգարիոյ. ամուսնացած 1844 Մայիսի 1ին Հիլտեկարտա–Լուիզա–Շարլոթթա–Թերեզա Պավիերայի Լուդովիկոս Թագաւորին աղջկան հետ :

3 · Կարոլոս-Փերդինանդոս 1818 Յուլ. 29ին ծնած զինուորական պաշտօնի մէջ է ։

4 · Մարիամ-Քարոլինա-Լուիզա-Քրիսթինա 1825 Սեպտ 10ին ծնած և 1852 Փետր · 21ին պսակուած Փերդինանդոս Ռէնիէրի Աւստրիոյ արշիդքսին հետ ։

5 · Գուլիելմոս-Փրանկիսկոս-Կարոլոս 1827 Ապրիլի 21ին ծնած որն որ զինուորական մեծ պաշտօններ ունի ։

Դ · Յովսէփ-Անտոն-Յովհ · 1776 Մարտի 9ին ծնած, Պալատին Հունգարիոյ և այլն · մեռաւ 1847 Յունվ. 13ին ։ Ասիկայ իրեք անգամ կարգուած է և երրորդ կինը դեռ ողջ է Վիւրթէմպերկի Լուդովիկոս դքսին Մարիամ-Տորոթէա աղջիկն է, ծնած 1797 Նոյ · 1ին ու 1819 Օգոստ, 24ին ամուսնացած ։ Երկրորդ ամուսնութենէն (որ Անհալթ-Պէրնպուրկ, Շոմպուրկի Վիքթոր իշխանին դուստրն էր Հերմինիա անունով) մէկ որդի մը ունեցաւ միայն Ստեփանոս-Փրանկիսկոս-Վիքտոր կոչուած որ 1817 Սեպտ · 14ին ծնած է ու հիմա Աւստրիացւոց մեծ մորաջախաներէն մէկն է ։ — Երրորդ ամուսնութենէն իրեք որդի ունեցաւ որք են 1 · Մարիամ-Եղիսաբէթ 1831 Յունվ. 17ին ծնած · ու ամուսնացած Փէրդինանդոս Էսդէի արշիդքսին հետ, որն որ 1849 Դեկտ · 15 մեռաւ ։ — 2 · Յովսէփ-Կարոլոս-Լուդ · 1833 Մարտի 2ին ծնած · զինուորական պաշտօնի մէջ ։ — 3 · Մարիամ-Հանրիէթ-Աննա 1836 Օգոստ · 23ին ծնած ։

Դ · Յովհ-Մկրտիչ-Յովս-Փաբիանոս-Սեբաստիանոս 1782 Յունվ · 20ին ծնած 1848 Յունիսի 29ին փոխանորդ ընտրուեցաւ Գերմանական կայսրութեան Ֆրանքֆորթի ազգային ժողովքէն, ու մնաց իշխանութեան մէջ ինչուան յաջորդ տարւոյն Դեկտ · 20ը · մեծամեծ զինուորական պաշտօններ ունի · ասիկայ թագաւորազունի հետ կարգուած չէ, հապա Մերանի Աննա կոմսուհւոյն հետ, ուսկից որդի մը ունեցած է Փրանկիսկոս անունով 1839 Մարտի 11ին ։

Ե · Ռէնիէր-Յովս-Յովհ · Միք-Փրանկ-Հերոնիմոս 1783 Սեպտ · 30ին ծնած · մեռաւ աս տարի Յունվ. 16ին ։ Ասիկայ ամուսնացած էր Մարիամ-Եղիսաբէթ-Ֆրանսուա Սարդենիոյ նախընթաց թագաւորին քրոջը հետ 1820 Մայիսի 28ին ։ Վեց որդի ունի որք են ։ — 1 · Ատելայիտ Սարդենիոյ արդի թագաւորին ամուսինը ։ 2 ։ Լէոփոլտ-Լուդովիկոս-Մարիամ-Փրանկ-Եւստաքիոս-Գերարտոս 1823 Յունիսի 6ին ծնած · զինուորական բարձր պաշտօններու մէջ է ։ — 3 · Էռնեստ-Կարոլոս-Փելիքս-Մարիամ-Ռէնիէր-Կոփրետոս-Կիրակոս 1824 Օգոստ · 8ին ծնած · զինուորական վիճակի մէջ է ։ — 4 · Սիկիսմոնդ-Լէոփ-Մարիամ-Ռէնիէր-Ամբր"-Վալենտինոս 1826 Յնվ · 7ին ծնած · զինուորական ։ — 5 · Ռէնիէր-Փերդինանդոս-Մարիամ-Յովհ-Եւանկելիստ-Փրանկիսկոս, 1827 Յնվ. 11ին ծնած · ամուսնացաւ 1852 Փետր · 21ին Կարոլոս Լուդովիկոս արշիդքսին Մարիամ-Քարոլինա դստեր հետ · ինչպէս վերն ալ դրինք ։ — 6, Հենրիկոս-Անտոն-Մարիամ-Ռէնիէր-Կարոլոս-Գէորգ 1828 Մայիսի 9ին ծնած ։

Զ · Լուդովիկոս-Յովսէփ-Անտոն 1784 Դեկտ · 13ին ծնած զինուորական պաշտօնի մէջ ։

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ Ս · ՂԱԶԱՐՈՒ